

Հաստատված է

«ՀՈՒՄԿ» ԿՀ Գիտխորհրդի

2016թ. մայիսի 30-ի թիվ 2 նիստում

Գիտական խորհրդի նախագահ՝

_____ Ն. Մ. Սահակյան

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

«ՀՈՒՄԿ» ԿՀ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

1.1 «ՀՈՒՄԿ» ԿՀ-ն իր առաքելությունն իրականացնելիս խնդիր է դնում որակյալ դասախոսական կազմի հավաքագրումը և վերջիններիս պրոֆեսիոնալ կարողությունների և որակական հատկանիշների պարբերաբար բարձրացումը:

1.2 Պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացումը հետևողական գործընթաց է, որն առավել արդյունավետ է ընթանում հստակ կանոնակարգման պարագայում:

1.3 Սույն ընթացակարգը ընդգրկում է «ՀՈՒՄԿ» ԿՀ-ում դասավանդողների մասնագիտական որակների բարձրացման և գնահատման կանոնակարգային մոտեցումներ:

2. Դասավանդողների ընտրության և ատեստավորման ընթացակարգը

2.1 «ՀՈՒՄԿ» ԿՀ-ում պրոֆեսորադասախոսական անձնակազմը աշխատանքի է անցնում մրցույթային և ոչ մրցույթային կարգով:

2.2 Անկախ դասավանդողների գիտական աստիճանից կամ կոչումից, «ՀՈՒՄԿ» ԿՀ-ում նրանք պարբերաբար ատեստավորվում են (առնվազն երեք տարին մեկ

անգամ): Ատեստավորման բացասական արդյունքների պարագայում ՄՈՒՀ-ի ռեկտորատը քննարկման առարկա է դարձնում կոնկրետ դասախոսի հետ աշխատանքային պայմանագրի խզման հարցը:

2.3 Դասախոսական անձնակազմի ատեստավորման ժամանակ հաշվի են առնվում վերջին երեք տարիներին ուսանողների կողմից նրա տրված գնահատականների, ուսումնական մասի տված բնութագրերի, կատարած գիտահետազոտական աշխատանքների, որակավորման դասընթացներին մասնակցության արդյունքները:

2.4 Ատեստավորման արդյունքներին տեղեկանալուց հետո դասախոսը իրավունք ունի 3 օրվա ընթացքում ծանոթանալու իր անձի գծով ատեստավորման բալային գնահատման հաշվարկներին:

3. Դասավանդողների մասնագիտական կատարելագործման ընթացակարգը

3.1 Դասավանդողների մասնագիտական կատարելագործումը կարգավորվում է ուսումնական մասի կողմից ներկայացվող վերապատրաստումների առաջակներով: Նաև հաշվի է առնվում «ՀՈՒՄԿ» ԿՀ-ից դուրս կազմակերպվող վերապատրաստումները:

3.2 Մասնագիտական վերապատրաստման ուղղությունը որոշելիս առաջնահերթ հաշվի են առնվում վերապատրաստվողի նախասիրությունները: Վերապատրաստմանը մասնակցող դասախոսը գրավոր դիմում է ներկայացնում ուսումնական մաս: Դիմելուց առավելագույնը 30 օր անց ուսումնական մասում քննարկվում է դասավանդողի կողմից ընտրված վերապատրաստման ուղղությունը, դրա համապատասխանությունը մասնագիտական կրթական ծրագրին, վերապատրաստման տեղի ընտրությունը (ներբուհական կամ արտաբուհական):

3.3 Այն դեպքում, երբ վերապատրաստումը պահանջում է կատարելագործման դասընթացին մասնակցության լրացուցիչ վճար, ապա ուսումնական մասն իր որոշմամբ միջնորդում է ռեկտորատին՝ քննարկելու վերապատրաստման գործընթացի ֆինանսավորման նպատակահարմարությունը: ՄՈՒՀ-ի ռեկտորատը, միջնորդությունը ստանալուց հետո, 15 օրվա ընթացքում ուսումնական մասին տե-

դեկացնում է արտաբուհական վերապատրաստման ֆինանսավորման հնարավորությունների մասին և ներկայացնում է դասավանդողի մասնագիտական վերապատրաստման հաստատության և ձևաչափի վերջնական տարբերակ:

3.4 ՄՈՒՀ-ի ռեկտորատի որոշումը որպես հիմք է ընդունվում կազմելու դասավանդողների վերապատրաստումների պլանային ժամանակացույց:

4. Պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական առաջընթացին աջակցման գործընթացը

4.1 Վերապատրաստումների աջակցման համար ուսումնական մասին իրավունք է վերապահվում միջնորդելու ռեկտորատին խզելու աշխատանքային պայմանագիրը այն դասավանդողի հետ, ով նախորդ երեք տարիների ընթացքում չի մասնակցել վերապատրաստման որևէ դասընթացի:

4.2 Ելնելով ՄԿԾ-ում տեղ գտած բարելավման փոփոխություններից, ուսումնական մասը կարող է միջնորդել և իր աջակցությունը ցուցաբերել դասավանդողին՝ վերապատրաստման կոնկրետ ուղղության և թեմայի գծով դիմելու ներբուհական կառույցներին կամ արտաբուհական հաստատություններին: